ՆՈՐ-ԴԱՐ

№ 39 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 12 Մարտի 1891 Երեքշաբթի 12 Մարտի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 39

Տարին 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., Հասուլ 5 կոպեկ։
Բաժանորդ գրուած են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Дня» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով. Յայտարարութիւնների համար 2 կ., բևկլամների համար կրկնապատիկ։

ТИФЛИССКАЯ ГУБЕРНСКАЯ ТИПОГРАФІЯ 14 МАР 1891

ՈՒՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. Ատրպատական։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր.
Երեկոյեան հեռագիրներ։
Բանաստեղծական.—Աւելորդ մարդի յիշատակարանը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»ԻՆ

ՀԻՒՍԻՍԱՐԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Մարտի.—Բարձրագոյն անուան հրամանով Ֆինանսների մինիստրին հրամայուած է գնել բոլոր տիրած դուրս չ'եկած պետական 5% տոմսերը 3-րդ փոխառութեան 1869 թուի, 4-րդ փոխ. 1876 թ. և 5-րդ փ. 1881 թուի, նոյնպէս և 1888 թուին ժամանակամիջոցը չնորոգուած բանկային 5% տոմսերը 1-ին փոխառ. 1860 թուի, ընդամենը սովորական 184, 198, 350 րուբլու. այդ նպատակով դուրս թողնել 4% օբլիգացիաներ սովորական 194 միլիոն րուբլու փոխ. 3 րդ 4% ներքին փոխառութիւն անունով։ Սոյն օբլիգացիաներին իւրացնւում է տարեկան եկամուտ 4%, որ վճարուելու է կիսամեայ ժամանակամիջոցներով —յունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին։ Հանգցնելու ենթարկուած օբլիգացիաների խաղարկութիւնը լինում է իւրաքանչիւր տարի մարտի 15-ից։ Ֆինանսների մինիստրի կարգադրութեամբ ետ գնումն նշանակւում է 1891 թ. յունիսի 15-ին պետական բանկում, դրա գրասենեակներում և բաժանմունքներում կանխիկ դրամ վճարելով նրանց սովորական դրամագլխից։ Դրամագլուխն և %% անյապաղ ստանալ ցանկացողներին նախապէս յայտնւում է, որ 5% տոմսերի ընդունելութիւնը նրանց վճարման տեղում 1891 թ, յունիսից կը լինի։ 3-րդ 4% ներքին փոխառութեան օբլիգացիաները որոշուած է ընդունել սովորական գնով կապալները ապահովելու համար։ 3-րդ 4% ներքին փոխառութեան օբլիգացիաների ընդունելութեան համար նշանակուած գները, արքունական կապալների համար տուած ըեհերն և փոխառութիւններն ապահովելու նպատակով, 80 րուբլուց պակաս չեն լինիլ 100 ի համար։ Բանկային 5% տոմսեր ունեցողներին թոյլ է տրւում վճարման համար ստանալ 3-րդ 4% ներք. փոխ. օբլիգացիաներ նոյն սովորական գումարով, ինչպէս և նրանց պատկանեալ բանկային 5% տոմսերը, սովորական դրամագլխի 100 րուբլուն 5 ր. կանխիկ դրամ աւելորդ վճարով և տալով նրանց լիշեալ տոմսերին մինչև 1891 թուի յունիսի 15-ը 5 տարեկանից 100-ի վրայ բարձրած %% դրամագլուխներից գոյացած եկամուտների տուրքը հանելով։ Փոխանակութեան համար ցանկացողներին թոյլ է տրւում յայտարարել պետական բանկին ոչ ուշ, քան 1891 թուի մարտի 30-ը։

Բարձրագոյն բարեհաճութիւն է հրատարակուած 1893 թուին Մոսկուայում տեխնիքական և արհեստագիտական կրթութեան վերաբերեալ ռուս գործողների համագումար կազմելու։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ. — Պատգամաւորների ժողովի քննութեանն են յանձնուած Բարձրագոյն մի քանի առաջարկութիւններ, որոնց թւում վերաբերում են ֆինլանդական մեծ իշխանութեան պատժական կանոնադրութեան և զինուորագրութեան մասին օրէնքի մէջ մտցնելիք փոփոխութիւններին։

ՕՐԵՕԼ.—Օկա գետը բացուեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բանկկոխից եկած պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ երէկ կէսօրից յետոյ աջողութեամբ այնտեղ է ժամանել ռուսաց թագաժառանգը և այսօր առաւօտեան պաշտօնապէս տեղի կունենայ ափ իջնելը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, — Մի քանի զիմստվոների խնդրքի պատճառով մանկավարժական թանգարանների տարեկան կանոնագրութեան ծիածիը է մշակուած։ Թանգարանները հիմնելու համար իրաւունք կը տրուի միմիայն այն դէպքում, երբ այդ թանգարանների գոյութիւնը ապահովուած լինի հարկաւոր միջոցներով և կառավարուեն առանձին խորհուրդներով։

ՕՐԵՕԼ.—Մարտի 4-ի խաղարկութեան 200,000 ր. տարաւ Մըցենսկի բանտի վերահսկիչ Նիկիտսկին։

ՊԱՐԻԶ.— Դատախազի վերահսկողութիւնն ուշադրութիւն գարձրեց, որ իսկապէս ազգասէրների ընկերութիւն գոյութիւն ունի, մինչդեռ այդ ընկերութիւնը փակուած է կառավարութիւնից։ Այսօր երեկոյեան հետախուզութիւն է նշանակուած, որի ժամանակ, երևի, ձերբակալութիւնները կը լինին։

ՊԱՐԻԶ.—Ազգասէրների ընկերութեան անդամների տների մէջ խուզարկութիւններ կատարելով, նշանաւոր թղթեր են բռնուած, բայց ձերբակալութիւններ չեն եղած։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Մարտի.—Պորուչիկ Մաշկովն ընկերական ճաշի ժամանակ յայտնեց, որ իւր արշաւանքը կը լինի Անգլոյում—Մեծնելիքի արքայանիստ քաղաքում—մայիսի վերջը, և կը շարունակուի, երևի, երեք տարի։ Արշաւանքի նպատակը զուտ գիտնական է, Արշաւախումբը հաւատացած է, որ Աբիսսինիայում սրտեռանդ ընդունելութիւն կունենայ, բայց այնտեղ գնալիս ճանապարհին կարող է վտանգների ենթարկուել. բացի դրանից, արշաւախումբը գուցէ ստիպուած լինի ընդհարում ունենալ Աշինովի հետ, եթէ միայն նա կուզևորուի Աբիսսինիա։

«С.-Пб. Вѣд.»-ն լսել է, որ անհրաժեշտ է ճանաչուած նաւատէրերի շահերն ապահովել նաւերի ձմերային կայանների համար տեղի ունեցող չափից դուրս կռիւներից։ Այսուհետև խորհուրդների նաւահանգիստների համար տուած տեղերի վարձի մասին որոշումներն ենթարկուում են բարձր կառավարութեան հաստատութեան։

ՕՏԵՍՍԱ.—Այսօր «Օրեօլ» շոգենաւով ուղևորուեցին Սեբերում երկաթուղի շինողները։

ՎԵՆՆԱ.—Armee Verordnungsblatt»-ում հաղորդում է, որ կայսրը ուլանների 11-րդ գնդի գընդապետ Մեծ Իշխան Պաւել Ալէքսանդրովիչին նշանակել է հետևակների 63-րդ գնդի շեֆ։

ՊԱՐԻԶ.—Այսօր, կէսօրից յետոյ, Հասարակապետութեան նախագահ Կարնոն դիտեց Պուալպոյի պանորաման, որ պատկերացնում է ռուսաց Թագաւորը Կայսրի թագադրութեան հանդէսը։ Հաս. նախագահը սրտանց շնորհաւորեց Պուալպոյին, որի ժամանակ ասաց, որ այդ ստեղծագործութիւնը նորից կապացուցէ Ռուսիային, թէ նրան լաւ են հասկանում Ֆրանսիայում։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

8 Մարտի

Լ'ոնդօն 84,1/4, 83,85, 84,1/4
Բերլին 41,37 1/2, 41,30, 41,35,
Պարիզ 33,37 1/2 33,30, 33,37 1/2,
Պոլու իմպերիալ . . . . . 6 ր. 79 կ. Ծախ.
Մաքս. կուպօն . . . . 136 ր, — կ. Ծախ.
Ասծաթ . . . . . 1 ր. 07 կ. Ծախ.
Բօրսային պրս . . . . . 4 և 5%
Պետական բանկի 5% տոմս.
1-ին շրջանի . . . . . 103 1/2 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 101 3/4 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 101 ր. 62 կ. գն.
4-րդ . . . . . 102 ր. — կ. սակ.
5-րդ . . . . . 102 ր. — կ. սակ.
6-րդ . . . . . 101 ր. 62 կ. գն.
100 և 1000 ր. արևելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի. . . . . 102 ր. 12 կ. գն.
2-րդ . . . . . 102 1/2 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 103 ր. — կ. գն.
Առաջին 5% ներքին փոխառ. տոմսեր . . . . . 237 ր. կ. սակ.
2-րդ . . . . . 222 1/2 ր. կ. սակ.
Երբորդ փոխ. Ազն. Հող. բանկի . . . . . 216 1/4 ր. — կ. գն.
5 1/2% բնեռները . . . . . 100 ր. — կ. գն,
Ֆրիդ. քաղ. վարկի ընկեր.
օբլիգ. . . . — ր. — կ գն
Բօրսային տրամադրութիւնը խաղաղ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Մարտի.—Այսօր կատարուած 2-րդ ներքին փոխառութեան խաղարկութեան ժամանակ գլխաւոր գումարները հետևեալ տոմսերը տարան.

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.	№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.
13,951	21	200,000	11,869	32	
890	33	75,000	11,572	4	
5,581	33	40,000	9,986	39	
585	12	25,000	15,037	41	
11,252	41	10,000	4,849	11	
480	35	10,000	16,520	11	
8,583	41	10,000	9,508	15	
12,701	44		12,430	11	
10,246	24		16,252	17	
18,451	18		2,442	13	
18,078	42		5,650	10	
5,468	10		5,622	5	
5,787	37		6,980	3	
11,113	39		3,315	3	
8,766	49		16,419	15	
10,512	12		15,596	15	
14,602	28		7,757	32	
2,423	35		607	45	
15,085	27		8,463	34	
8,073	46		11,114	18	

5,000-ական և 8,000-ական — 1000-ական և 4-ական

Պետական բանկում մարտի 4-ին ներքին երկրորդ փոխառութեան տոմսերի 50-րդ խաղարկութեան ժամանակ հետևեալ տոմսերը տարան.

Հինգ հարիւրական րուբլի.

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.	№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.
1	143	14	16,083	31	13,028
1	1,277	14	17,842	32	6,011
1	4,031	15	13,620	32	8,021
1	5,331	15	15,963	32	9,657
1	7,503	16	14,357	32	14,411
1	11,794	16	15,950	33	5,339
1	15,127	16	16,709	33	6,281
1	15,708	16	17,131	33	8,742
1	16,114	17	596	33	12,680
1	17,152	17	1,070	33	14,867
2	4,454	17	9,669	33	17,121
2	7,466	17	11,495	33	19,325
2	8,878	17	14,368	34	7,715
3	2,875	17	15,620	34	8,557
3	4,443	17	17,097	34	16,073
3	4,495	17	17,543	34	19,473
3	12,448	17	18,937	35	421
3	18,375	17	19,484	35	15,574
4	3,591	18	429	35	19,325
4	3,877	18	2,140	35	19,329
4	12,676	18	11,792	36	99
4	14,384	18	15,180	36	1,665
4	15,199	19	1,992	36	4,780
4	18,845	19	12,081	36	5,931
4	19,301	19	15,952	36	6,351
5	2,724	19	19,715	36	6,530
5	3,834	20	4,728	36	12,136
5	4,864	20	9,237	37	98
5	5,712	20	14,629	37	2,644
5	8,766	20	18,988	37	19,933
5	9,185	21	836	38	5,178
5	12,391	21	3,351	38	11,237
6	14,643	21	6,375	38	19,633
6	16,319	21	11,359	39	8,138
6	16,661	21	15,694	39	9,777
7	3,634	21	15,939	39	12,749
7	3,819	21	17,749	39	15,486
7	7,707	21	18,906	39	15,508
7	9,784	22	3,830	39	16,613
7	13,725	22	7,779	39	16,681
7	14,941	22	10,917	40	12,804
7	19,489	22	15,395	40	15,325
8	570	23	1,992	40	18,009
8	4,029	23	5,643	40	18,610
8	7,694	23	6,693	40	19,148
8	9,937	23	8,283	41	408
8	12,068	23	10,130	42	7,966
8	14,768	23	10,158	42	13,801
8	14,917	23	18,129	42	17,192
8	14,988	24	2,544	43	8,948
9	91	24	5,002	43	15,350
9	15,032	24	11,819	44	2,723
9	15,641	24	12,462	44	3,556
9	17,545	24	14,469	44	4,388
9	17,626	24	14,942	44	6,177
10	1,720	24	19,984	44	8,205
10	3,394	25	767	44	11,769
10	5,314	25	1,554	44	18,980
10	6,049	25	6,796	45	234
10	10,417	25	19,505	45	6,622
11	1,930	26	2,388	46	3,719
11	2,488	26	5,468	46	10,513
11	3,304	26	11,668	46	11,484
11	12,324	26	14,282	46	13,619
11	14,377	26	15,355	47	176
12	9,410	27	1,753	47	623
12	9,503	27	5,505	47	9,575
12	9,520	27	6,411	47	14,063
12	1,068	27	7,271	47	16,961
12	1,153	27	10,576	48	625
12	14,456	27	11,074	48	5,716
12	26,767	27	12,610	48	8,962
12	19,414	28	1,670	48	13,281
12	19,957	28	3,885	48	16,523
13	8,444	28	10,480	48	19,121
13	10,990	28	13,158	49	1,962
13	12,518	28	19,388	49	2,419
13	14,816	29	1,114	49	3,362
13	18,517	29	1,879	49	12,374
14	3,579	29	11,917	49	16,941
14	5,251	29	14,235	49	18,049
14	6,120	29	17,194	49	19,695
14	6,664	30	3,834	50	502
14	7,117	30	14,167	50	15,882
14	10,635	31	342	50	16,104
14	12,646	31	558	50	18,028
14	13,091	31	638		

—

Հանգած տոմսեր.

15,813, 11,717, 9,273, 6,450, 13,403 3,665, 1,409, 18,859, 17,581, 18,618 5,052, 661, 13,897, 420, 11,511, 6,280, 6,017, 3,369, 8,313, 8,331 11,285, 19,432, 4,603, 2,644, 1,483, 756, 4,368, 19,969, 13,813, 13,668, 15,874, 12,843, 18,879, 11,940, 9,375, 7,053, 18,635, 10,090, 13,361, 10,426, 19,111, 16,845, 6,668, 2,838, 12,133 17,420, 19,483 14,135, 12,007, 17,487, 2,900, 10,685, 15,619, 18,766, 9,552, 15,313, 3,598, 11,879, 16,110, 8,053, 17,095, 12,772, 17,787, 5,712, 15,879, 6,029, 12,984, 3,109, 13,832, 3,205, 15,316, 5,753, 8,445, 10,341, 15,559, 12,933, 8,575, 10,879, 15,709, 17,050, 1,803, 4,894, 18,498, 6,813, 2,472, 6,145, 7,976, 14,907, 11,674, 9,913, 10,440, 13,894, 14,737, 4,057։

(Երևկ. հեռ. չորք. երեք.)

ՔՐՈՆԻԿՈՆ

Երկուշաբթի, մարտի 11-ին, քաղաքային խորհրդի սովորական նիստին Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը չկայացաւ, յետաձգուեցաւ մարտի 25-ին։

—

Ինչպէս արդէն հաղորդեցինք, այս օրերս Թիֆլիսի դատական պալատի քրէական բաժնում Ա. Ս. Ղորդանանց-Ներսեղարացրնչիկ Սոֆիա Տէր-Մկրտչեանցին աքսորի դատապարտեցին։ Այժմ, ինչպէս «Кав.»-ը լսել է, նրանց գործի առթիւ պետական սենատին վճռաբեկ բողոքներ պիտի ներկայացնեն՝ մինը դատախազի օգնական պ. Խլոդովսկին և միւսը Տէր-Մկրտչեանցին պաշտպանող երդուեալ հատուածարժատար Պ. Ա. Օգանջինովը։

—

Լսում ենք, որ իշխան Նապոլէօն Ամատունին յանձն է առել հայ դերասանական խմբի զեկավարութիւնը և բոլոր դերասանների ու դերասանուհիների, հետ առաջիկների մասին խօսելով, մտադիր է առաջիկներ նախապատրաստել թատրոնական Ակմբին վիրջնոս կարծիքն իմանալու համար։ Գովելի է իշխան Ամատունու եռանդը, որ նա միշտ ցոյց է տուել հայ թատրոնական գործին այն ժամանակ, երբ հայոց թատրոնի հետ գործ ունեցողները բոլորը յուսահատուել և հեռացել են, իշխանը երբէք չէ յուսահատուել և ամեն կերպ աշխատել է հայոց թատրոնի բնկած վիճակը ոտի կանգնեցնելու։ Կատարեալ յոյս են տալիս մեզ, որ այս տարի սեպտեմբերից Թիֆլիսում վերջապէս կ'ունենանք բեմական կանոնաւոր խումբ, որ ամիսը մօտաւորապէս 5—6 անգամ ներկայացումներ կը տայ։ Բնակարտաւորը մեծ մասամբ նորոգուած է։

—

Բագուում հրատարակուող «Каспій» թերթը հաղորդում է, որ վերջին խաղարկութեան 200,000 ր. ընկել է Բագուի «Մետրոպոլ» հիւրանոցի ժի սպասաւորի տոմսին, իսկ հիւսիսային գործակալութիւնը հաղորդում է, որ նոյն խաղարկութեան 200,000 րուբլին ընկել է Մցենսկի բանտի վերահսկիչ Նիկիտսկուն (տես «Նոր-Դար»-ի այսօրուայ Օրեօլից հեռագիրը)։ Որն է ճշմարիտ և որն է իսկական բաղդաւորը—Բագուի հիւրանոցի սպասաւորը, թէ Մցենսկի բանտի վերահսկիչը։

—

Այս օրերս Պետերբուրգի գեղարուեստների ճեմարանում տեղի է ունեցել 9-րդ մրցանակաբաշխութիւնը նկարչութեան և գծագրութեան համար, որին մասնակցում էին ուսումնարանական դասական հաստատութիւններ։ Նկարած և գծագրած

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ՅԱՎՇԴՊԿՀՎ)

Տարի չորրորդ, 18-րդ թերթ
Գործ 20-ին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոկտեմբերի 7-ին տարաժողովի (Շուտաո տարաժող). —

Ներկա էին 45 հոգի, որոնց մեջ 9 թեկնածուներ։ Ներկա էին նաև Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Ս. Ա. Ա. Ա

տեղը կինկով պատեն և առաստաղը քարթեղ ծածկեն, որպէս զի հացը թէ թանով ծածկեն, 4) Թողից և թէ որդերից ապատ մնայ։ Պատուիրել պ. տանուտէրին, որ ստիկանութեան միջոցով խստութեամբ հետևէ, որպէս զի փողոցներում ոչ մի անմաքրութիւն չերևայ և նկատուած կեղտոտութեան համար տան տիրոջից տուգանք պահանջել՝ առաջին անզգուշութեան համար 5 ռուբլի Ուրախալի երևոյթ. այս բոլորի համար մենք պէտք յայտնենք մեր շնորհակալութիւնը պ.պ. Ուշակովին, տեղոյս «պրիստաւ» Ա. Ղարախանեանցին և տանուտէր Զալալ Զալալեանցին, որոնք մինչև այսօր ամեն հնար գործ են դրել, ստիպել են, պահանջել են, ինչ որ հարկաւոր է. ուստի երկու տարի է ահա մեզանում ոչ մի տկարութիւն չկայ։

Մի ախորժ հանգամանք. երկու երեք տարեայ ընթացքում հազիւ մեզանում մի ննջեցեալ պատահի, իսկ պատահած ժամանակն էլ քահանայի բացակայ լինելն է պարագնում մեզ։ Մատ օրերս վախճանուեց այստեղ 65 տարեկան մի կին, աւազ բժշկի ցուցման համաձայն հանգուցեալն «րակ» ցաւն է ունեցել, որը բժշկելու չատ անյարմարութիւններ ունէր՝ մանաւանդ Սարիղամիշի պէս մի դիւղում։ Հանգուցեալի մարմինն երկու օր էր ինչ տանն էր մնացել քահանայի ուշանալու պատճառով։ Վարսի հոգևոր կառավարութեան կարգադրութեամբ մեզ համար որոշուած են Բէգլարեանի քահանաներն, որոնք հերթով գալիս են այստեղ միայն Մինդեան և Յարութեան տօներին, բացառիկ դէպքերում քահանաներն Սարիղամիշ գալ դժուարանում են։ Հանգուցեալ Կիրակոս տէր Թէոդիկ, նոյն գիւղի քահանայ Տէր Վարդան հայրը, հազիւ հազ բարեհաճեց Սարիղամիշ գալ հազարու մի տեսակ արտունչներ յայտնելով, որ հանգուցեալի օրդոցը չատ տիւրը արամադրութեան մէջ թողէց։ Հանգուցեալի աւագ որդին, պ. Յարութիւն Իսահակեանցն, իր հանգուցեալ մօր աճիւնը յարդելով դամբարանի վրայ մի երկու սրահառաչ խօսքով նուիրից առաջ ծիսական դպրոցին 40 րուբլի։

Փետրուարի 7-ին կայացաւ տեղիս դպրոցասէրների ընդարութիւնը. ընտրուեցան պ.պ. Կարապետ Իսահակեանցը, Բագրատ Զալալեանցը և յոյն Ագաճան Տրանգաֆիլեան։ Ընտրուածներին իրենց ապագայ գործունէութեան համար ի սրտէ աջողութիւն ենք ցանկանում։

Մարտի 2-ին, Կայսերական տօնի առթիւ փոխ-գնդապետի պաշտօն ստացաւ հայ աստիճանաւոր պ. Բարա Քեխայեանցը։ Յարգելի պարոնը տաս տարի է ինչ Սարիղամիշումն է ապրում և ամեն անգամ մասնակցել է բարեգործական նպատակով հաւաքուող հանգանակութիւններին, այսօր էլ ինքն անձամբ հանդանակութիւն է բաց արել մեր դիրասան պ. Աղաեանի համար և եռանդով փող է հաւաքում։

Ս. Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐԱՇԵՆԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄԻԼՈՒՆԻՆ.—Միլանի՝ մեր ընթերցողներին յայտնի նամակին Հարաշանինը իր «Վեդելո» լրագրում հետևեալ պատասխանն է տալել.

«Ողորմած պարոն, ես ստացայ ձեր՝ Վիեննայից փետրուարի 20-ին գրած նամակը։ Մտադրութիւն չունիմ ձեզ քաղաքավարութեան դասեր տալու,—այդ պակասը պէտք է լրացնուէր իւր ժամանակին դաստիարակութեան օգնութեամբ,—բայց գրածից կարելի էր ապասել, որ նա գիտենար քաղաքավարութեան կանոնները, քան թէ դուք այդ ցոյց տուիք ձեր գրականական վերջին ստեղծագործութեան մէջ։ Սովորաբար թագաւորները փախստեան են տալիս յայտնի դրութիւններից, և այդ նրանով է բացատրուում, որ այդպիսի դրութիւնները նոյնպէս անյարմար են նրանց համար, ինչպէս և դրաւիների և ուրիշ սովորական մահկանացուների համար, որոնք լաւ կրթութիւն են ստացած։ Ես, սակայն, հրաժարուում եմ ձեզ այդ կանոնները ներշնչելու աշխատանքից, որովհետև լինի թէ ոչ, դուք էլ արդէն անցել ենք այն հասակից, երբ կարելի է յուսալ՝ դաստիարակչական մեթոդները գործադրելու աջողութեան վրայ։ Բայց և այնպէս, միւս կողմից, ես անհրաժեշտ եմ համարում ազատել ձեզ այն մոլորութիւնից, որին դուք անձնատուր էք էք լինում, ըստ երևոյթին, ոչ անյայտ նպատակով։ Ինձ համար բոլորովին միևնոյն է, թէ դուք ինչ կարծիք ունիք իմ մասին։ Եթէ դուք իմ մասին վատ կարծիք ունիք, ապա դա ինձ բոլորովին չի բարկացնում։ Եթէ լաւ կարծիք ունիք, այդ էլ ինձ չի շոյում։ Ես ենթադրում եմ, որ դուք էլ նոյնպէս անտարբեր էք իմ ձեր մասին ունեցած կարծիքի վերաբերմամբ։ Ուստի չարժէ այդ մասին երկար խօսել, մանաւանդ, որ ըստ իմ ստացած դաստիարակութեան ես դժուարանում եմ օգտուելու այդ վերաբերմամբ ձեր չափազանց հարստահարութեան քաղաքից։ Հետևաբար, թէ՛ ես և թէ՛ դուք մենք ենք մեր ընթերցողների աչքում մեր գործունէ

որից երևում է, որ Կնիչանինան և Մարկովիչը ղէնք էին Հարաչանինի ձեռքում Միլանին սպանելու համար։

—Լրագրները լուր էին հաղորդել, թէ Բուլղարական պրինց Ֆերդինանդի և մինիստրութեան միջև մեծ անհամաձայնութիւններ են ծագել և կառավարութիւնը համոզուել է, որ պէտք է մօտենալ Ռուսիային, բայց այժմ բուլղարական պաշտօնական թերթը գրում է, որ այդ լուրը հիմք չունի և սխալ է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԻ ԿՆՈՋ ՍԽՐԱԳՈՐԾԻՉՆԵՐԸ

—

Թիֆլիսցիները գուցէ յիշում են յայտնի Գուլակ-Արտեմովսկայա անունով կինջը, որ իւր բազմաթիւ երկրպագուներից մինի հետ «դուբաչկի» խաղալով, տասնեակ հազարներ էր տարել նրանից և բաւական խոշոր գումարի կեղծ թղթադրամներ էր կարել, որի համար և Սիբիր էր աքսորուած։

Երկար ժամանակ այդ զարմանալի կինջ մասին ոչինչ չէր լսուում։ Այժմ «Пет. Вест.»-ի Իրկուտսի թղթակիցը հետեւեալ տեղեկութիւնները է հաղորդում նրա մասին։

—Սիբիրում,—գրում է թղթակիցը,—Գուլակ-Արտեմովսկայան ամուսնացաւ անսովոր գեղեցկութեան, ճարպիկութեան, խելքի և սիրելիութեան բազմաթիւ երկրպագուներից մի երիտասարդի հետ։

Նրա դժբաղդութեանը հաւատարիմ մնաց միմիայն Ալ. Ալ. Կ.-ն, մի խիստ համակրելի երիտասարդ, որ այն ժամանակ ծառայում էր վարչութիւններից մինում։ Ծօք չկայ, Գուլակ-Արտեմովսկայան, որ նրա վրայ սկզբում ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում, ցնծութեամբ ընդունեց երիտասարդի առաջարկութիւնը։ Նրանց պսակադրութեան հանդէսը տեղի ունեցաւ բանտի եկեղեցում և երիտասարդ ամուսինն ինքնակամ նրա հետ աքսոր գնաց, բոլոր աքսորեալների խմբի հետ նրան մինչև Տոմսկ ուղեկցելով։ Այդ քաղաքից էլ նրանց իրաւունք տուեց միասին գնալու մինչև աքսորի տեղը, այսինքն մինչև Իրկուտսկի նահանգը աքսորեալների խմբից առանձին, իրենց հաշուով։

1880 թուի սկզբներում երիտասարդ ամուսինները Իրկուտսկ եկան պոստային կառքով, որոնց իսկոյն էլ բնակեցրին Կիրէնի շրջանում։

Այն ինչ Գուլակ-Արտեմովսկայան խիստ ցանկանում էր Իրկուտսկում կամ գոնէ այդ քաղաքից մօտ ապրել։

Նա սկսեց իրեն անսովոր կրօնասէր և աստուածասէր ցոյց տալ և, գնալով ամբողջ Սիբիրում ամենքից անկեղծ սիրուած և յարգուած սրբազան Բենիամինի, Իրկուտսկի արքեպիսկոպոսի մօտ, զրոյց իւր ապաշխայ բոլոր մեղքերը և յայտնեց նրան, որ ճշմարիտ ճանապարհի գալով, ինքը կը ցանկանար չարունակ աղօթելով մաքրել իրեն Աստուծոյ առաջուում, բայց օրովհետև Կիրէնի շրջանում ոչ միայն որ և է վանք չկայ, այլ և եկեղեցիներ էլ չատ քիչ կան, ուստի նա արքեպիսկոպոսին խնդրեց իւր փոխարէն խնդրագրայոյց լինել տեղական իշխանութեան, որ նրան թոյլ տան Իրկուտսկում ապրել, որտեղ կան թէ չատ եկեղեցիներ և թէ մինչև անգամ կուսանոց, որտեղ ինքը կարող էր չարունակ աղօթել։

Նրա խնդիրքը կատարուեց։ Եւ ահա Գուլակ-Արտեմովսկայան բնակութիւն է հաստատում գիւղում, իսկ նրա ամուսին Ալ. Ալ. Կ.-ն մնում է Իրկուտսկում, որտեղ նա չուտով ծառայութեան մէջ է մտնում։ Գուլակ-Արտեմովսկայան ամեն օր Իրկուտսկ էր գալիս և չատ փառաւոր կեանք էր վարում այնտեղ։ Մի գեղեցիկ բնակարան վարձելով և մեծ ճաշակով զարդարելով այդ, նա ապրում էր ինչպէս Պետերբուրգում։

Բազմաթիւ ծանօթներ ունենալով, Գուլակ-Արտեմովսկայան անմիջապէս սկսեց իւր տանը թղթախաղ սարքել փողով, և, ի հարկէ, գլխաւոր խաղն, ինչպէս և Պետերբուրգում, անվեղ «դուբաչկին» էր։

Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում կրկնուում էին Պետերբուրգի սխրագործութիւնները, որի ժամանակ մի քանի անձեր լաւ տանուլ էին տալիս։

Շուտով տեղական իշխանութեանը այդ յայտնի եղաւ և Իրկուտսկի նահանգապետը Գուլակ-Արտեմովսկայային խրատ արգիլեց իւր տանը թղթախաղ սարքել՝ նախազգուշացնելով նրան, որ հակառակ դէպքում ինքը ստիպուած կը լինի նրա բնակութեան տեղը սահմանափակել Իրկուտսկի մօտ գտնուող Կիրէնի խուլ շրջանում, ինչպէս առաջուց նա արդէն մտադիր էր անելու։

Այդ սպառնալիքը խիստ ազդեց Գուլակ-Արտեմովսկայայի վրայ։ Նա անմիջապէս դադարեցրեց իւր տանը թղթախաղը և սկսեց նոր ծրագիրներ կազմել։ Շուտով նրա գլխում նոր միտք յղացաւ։ Նա ուշադրութիւն դարձրեց իւր տան տիրոջ, պաշտօնաթող գնդապետ Ա. Ա. Բուկովսկու վրայ։

Կոկետութիւն անելով, նա բոլորովին գրաւեց այդ հարուստ ծերունուն և բոլորովին մօտեցաւ նրան, երբ նրան թոյլ տուեց Իրկուտսկում ապրելու։

Այդ բոլորը յայտնի եղաւ նրա ամուսնուն, որ չուտով թողեց Իրկուտսկը և վերջնականապէս բաժանուեց իւր կնոջից։

Իրկուտսկում չմնաց նաև ինքը Գուլակ-Արտեմովսկայան։ Նա փախաւ, թէև անյաջող։ Այդ բանն ահա ինչպէս պատահեց։

Նա վազուց էր մտադիր փախչելու և այդ նպատակով խնդրեց, որ իրեն Կահիտա տեղափոխեն, բայց մերժում ստացաւ։

Այդ ժամանակ եւրոպական Ռուսիայից Իրկուտսկ գնալով տեղական հարուստ վաճառականի տանը դայեակի պաշտօն ստանձնեց մի բաւական զարգացած, հաճակրելի, թէև ոչ երիտասարդ կին։ Այդ կինը, ինչպէս երևում է այժմ, դժբաղդաբար, փոքր ինչ նման է եղել Գուլակ-Արտեմովսկայային։ Այդ հանգամանքից էլ օգուտ է քաղել խորամանկ արկածախնդիր կինը։

Նա ամիսներս ծանօթացաւ նորեկ դայեակի հետ և կարճ ժամանակից յետոյ երկու կանայքն էլ այնպէս սերտ բարեկամանում են իրար հետ, որ, ինչպէս ասում են, մէկին առանց միւսի չի կարողանում ապրել։

Անցնում է դարձեալ մի կարճ ժամանակ... և յանկարծ նրանք երկուսն էլ անհետ կորչում են Իրկուտսկից...

Սկսում են որոնել, բայց ի զուր։ Փաստական կանանց հետ էլ չէ գալիս։ Վերջապէս աջողւում է դայեակի հետքը գտնել։ Դրան գտնում են սպանուած՝ գետի ափում, Իրկուտսկից մի քանի վերստ հեռաւորութեամբ։ Սպանման կասկածն ընկնում է նրա ընկերուհու Գուլակ-Արտեմովսկայայի վրայ, սկսում են ուելի եռանդով որոնել նրան։ Երկար ժամանակ նրան չէին կարողանում գտնել, բայց ահա մօտերս տեղեկութիւն է ստացւում, թէ Գուլակ-Արտեմովսկայան ձերբակալուած է Մաիրենսկում, Տոմսկի նահանգում, և նրա մօտ գտնուած է սպանուած դայեակի անցագիրը։ Երևի Գուլակ-Արտեմովսկայան յոյս է ունեցել, որ այդ անցագրով կարող է անվտանգ կերպով փախչել, օրովհետև սպանուածի և իւր նշանների մէջ նմանութիւն կայ, բայց նա սխալուել է այդպէս հաշուելով։ Այժմ նրան բռնել են և Իրկուտսկ են վերադարձնում, որտեղ և նրա դէմ պատկը բացուի սպանուած դայեակի դործի մասին։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հ՝ սեռային գործակալութիւնից)

—

ԼԵՐԵԴԻՆ, 8 Մարտի.—Այստեղի և Դանկովի էլևատորների շինութիւնը վերջացած է և երէկ բացուած է հացահատիկների ընդունելութիւնը, բացի անմաքուր անցկացնուելիք հացահատիկներից։

Ա.ՕԽՄ.ԲՈՒԴ.—Այստեղ հասան Փիւտրսիլ և Գրենատ անունով ֆրանսիական գիտնականները, որոնք ուղարկուած են ֆրանսիական լուսաւորութեան մինիստրութիւնից հաշդարն ուսումնասիրելու համար։

ՀՌՈՄ.—Իտալիայի և Աբիսսինիայի թագաւոր Մենելիքի միջև եղած քաղաքագիտական յարաբերութիւնները կտրուած են 1889 թուին հաստատուած աբիսսինիտալական դաշնագրի վերջնական խմբագրութեան վերաբերմամբ համաձայնութեան չգալու պատճառով։ Իտալական դեսպան գրաֆ Անտոնելին հեռացաւ Աբիսսինիայից։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«Նոր-Դար»-ի № 29-ում ոմն «Ս. Յակոբանեան եկեղեցու ծխական» անունով, իբր թէ պատասխանելով պ. Մխականի նամակին «Նոր-Դար»-ի № 14-ում, բոլորովին յանդգնօրէն վիրաւորում է իմ անձնաւորութիւնը։ Թողնելով պ. Մխականին պարզելու այն հանգամանքը, որով զարմանալի տրամաբանութեամբ պ. Ծխականի նամակի մէջ այս երկրորդ Մխականը տեսնում է ակնարկութիւն այնպիսի դէպքերի, որոնք տեղի են ունեցել այդ նամակը «Նոր-Դար»ում լոյս տեսնելուց յետոյ, ես հարկաւոր եմ համարում երկու խօսք ասել։—Պարոն երկրորդ Մխականը գրում է ի միջի այլոց. «Փետրուարի 3-ին բոլոր ընտրեալները մնանգամից հեռացան պատգամաւորութիւնից (բացի Ղ. Թումանեանցից՝ այսինքն իմ նուաստութիւնից), իրենց ընտրութիւնն անկանոն համարելով։» Ընտրութիւնը անկանոն չէր և կատարուեցաւ ամենայն կարգապահութեամբ։ Իսկ եթէ ոմանք իրենց կողմի անձերի թիւն աւելացնելու անօգուտ ջանքերը տեսնելուց յետոյ՝ աչխատեցին խանգարել ընտրութիւնը՝ հետևեալ անգամ նպատաւոր ընտրութիւնն ապահովացնելու յուսով այդ չէ նշանակում, թէ ընտրութիւնն անկանոն էր։ Իսկ առարկութիւնը՝ թէ 54 ծխականներով կատարուած ընտրութիւնը վաւերական լինել չի կարող, անգոր է, քանի որ «Հրանտգի» մէջ, ինչպէս յայտնի է, այս մասին որոշ թիւ չէ նշանակուած։ Նոյն իսկ հոգաբարձական ընտրութեան միջոցին, երբ բոլոր ծխականներն առանձին-առանձին հրաւիրւում են, հազիւ 60 հոգի ներկայ են լինում։ Մինչ այս էլ հարկաւոր է յիշել, որ նախկին երէցփոխին ընտրուեց 10—15 ձայնով միայն։ «Ոչ մի երէցփոխ,—ասում է երկրորդ Մխականը,—չի կարող իրեն այդ տեղը հասցնել (իրեն համարել առաջնորդ, աւագ քահանայ և այլն)։ Եթէ այժմեան երէցփոխ և ուսումնարանի հոգաբարձութեան նախագահ Թումանեանցի տան ապօրինի երկու պայմանագրերն ուր հարկն է առաջարկելուն համար է նրան առաջնորդ անուանում, դա չատ սխալ է։ «Աւագ քահանայ եկեղեցու մէջ եթէ պ. Գ.-ի ժամասացութեան համար է ակնարկում, այդ երէցփոխից չէ կախուած.» այս նախադասութիւնը իսկոյն է և անպատճ։ Իբր —ապօրինի երկու պայմանագրերի մասին ասածը զրպարտութիւն է, ինչպէս այդ արդէն պարզուած է. այս կայ միայն, որ տան վարձից տակաւին պ. Երէցփոխը չէ վճարել տան տիրոջը 60 րուբլի, թէև օրագրութեամբ վճռուած է։ Ոմն Գ.-ի ժամասացութիւնը մէջ բերելը առնուազն թիւրիմացութիւն է, քանի որ պլիրներին երգելու իրաւունք տալ կամ չ'տալն անգամ աւագ քահանայից չէ կախուած,—և միայն մեր Երէցփոխն է, որ իրաւունք է համարում իրեն պատարագի միջոցին հրապարակով հրամայելու այս ինչ աիրացուին այս ինչ բանը երգելու, իսկ այն ինչ սիրացուին լռելու։

Գ. Թումանեանց.

5 մարտի
Գանձակ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացք թիւ 1-ին

Բաքուից,	պատ.	11 ժ. 8 ր. եր.
Բագուից,	«	7 ժ. 40 ր. առ.
Բաքուից,	մար. ապ.	8 ժ. — ր. առ.
Գանձակից,	»	8 ժ. 20 ր. եր.

Գնացք թիւ 3-ին գնում է

Բաքուից,	պատ.	8 ժ. 40 ր. առ.
Բագուից,	»	12 ժ. 8 ր. գիշ.
Բաքուից,	մար. ապ.	3 ժ. 10 ր. ց.
Գանձակից,	«	ժ. 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երկքշաբթի և չարաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երկքշաբթի օրերը։

I Ռօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից	գնում է	9 ժ. 30 ր. առ.
Ռօստով	գալիս է	8 ժ. 48 ր. առ.
Ռօստովից	գնում է	7 ժ. 28 ր. ցե.

ՇՈՓԵՆԱԻԱՑԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաքուից գնում են՝

Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռօսիյսկ և Սուխում,
Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով։

Վլադիկաւկազ գալիս՝ 7 ժ. — ր. եր.

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. ռուտասոհանեանի նաւահանգիստներով Կ. Պօլիս։

Բաթում գալիս են

Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Ղեսսայից, ուղիղգծով։

Ուրբաթ՝ առաւօտեան Ղեսսայից ուղիղ գծով, Կերչի և Նովոռօսիյսկի վրայով։

Կիրակի՝ առաւօտեան Կ. Պօլսից

Փոթիից Բաթում գնում են։

Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին
Շաբաթ՝ ախաւօտեան ժ. 9-ին
Սրեքշաբթի՝ երեկոյեան,

Փոթիից Բաթում գալիս են՝

Ուրբաթ և կիրակի կէս օրից յետոյ ժ. 2-ի մօտերը։

II Կասպից ծովի վրայ

Բագուից գնում են

Գետրովսկ և Դարբ, Աչէքսանդրովսկ-Նոյեմբերի 9-ին, դեկտեմբերի 7-ին, յունուարի 4-ին, փետրուարի 1-ին և մարտի 1-ին, կէս օրից յետոյ ժ. 2-ին։

Ուզուն-Ադա և Կրասնաւոդսկ՝ երկուշաբթի և ուրբաթ, առաւօտեան ժ. 11-ին։

Լենքորան, Աստարա և Էնզելի-Նոյեմբերի 5-ին և 1-ին, դեկտեմբերի 3-ին 17-ին և 31-ին, յունուարի 14-ին, 28-ին փետրուարի 11-ին, 25-ի և մարտի 11-ին, առաւօտեան ժ. 11-ին։

Զիքիլեար, Աստրաբադ, և Մէշհետսեր՝ Նոյեմբերի 5-ին, 10-ին, դեկտեմբերի 3-ին, 17-ին, 31-ին, յունուարի 14-ին, 28-ին, փետրուարի 11-ին, 25-ին և մարտի 11-ին, առաւօտեան ժ. 11-ին

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

KAKAO
БЕЗЪ МАСЛА
ВЫСШАГО КАЧЕСТВА
МИНУТНОЕ ПРИГОТОВЛЕНІЕ
ФАБРИКИ
С.СІУиКо

36—12

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆ
Մարտի 14-ին կը լինի
ՆԻԿԻՏԱ
յայտնի երգչուհու
ԿՈՆՑԵՐՏԸ
Պալատական գաշնակահար պ. ԼԻԲԼԻՆԳԻ մասնակցութեամբ։
Տոմսակները և ծրագիրները կարելի է ստանալ Բ. Մերիմանեանի գաշնամուրների դեպոյում, Վլոռցովսկայա փողոց։ 2—1

Պատրաստելը և վաճառումը, որպէս վնասակար նիւթեր չպարունակող իւր բաղադրութեան մէջ, թոյլատրուած է Պետրովսկի Նահանգական Վարչութեան Բժշկական բաժնի կողմից, առևտրական ընդհանուր հիմունքների վրայ։

ՆՈՐ ԿՕՃԼԴ-ԿՐԷՄ
ԱԼԴԵՀԻԴ
ՎԼԻՒՕ ՔԻՄԻԿՈՍԻ
Մի սրուակի գինն է 1 րուբլի։

Սմեն օր գործածելով, փափկացնում է մորթը, սպիտակութիւն և թարմութիւն է տալիս նրան, պահպանում է խորշումներից և միևնոյն ժամանակ աննկատելի է մնում երեսի վրայ։

Վաճառուում է բոլոր դեղատներում, դեղօրէից և հոտաւէտ իւղերի ամենալաւ մագազիններում. Թիֆլիսում—Վ. Գրիվնակի և Կովկասեան ընկերութեան դեղօրէից մագազինում։

Գլխաւոր պահեստը Բ. Կրեմէրի մօտ, Մոսկուայում, Ստարոգոստինսկի Դվոր, № 29—30։
(№ 8752) 10—1

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Марта 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրատենեակի Типографія газеты конторы Кавказъ, Гол. пр., д. Читахова